ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 16/18-1

15.04.2016թ. կնքված N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/6-16/18 ծածկագրով «Պետության կարիքների համար համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակման և սպասարկման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագրի

ք.Երևան «01» 07 2016թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է ՀՀ կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սոֆթ Թայմ» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Հ. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով 15.04.2016թ. կնքված N «ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/6-16/18» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետում «4212000 (չորս միլիոն երկու հարյուր տասներկու հազար)» թվերն ու բառերը փոխարինել «4231800 (չորս միլիոն երկու հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր)» թվերով և բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված N 1-ի (Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի) N2 աղյուսակում և դոմեյնների ցանկի վերնագրում «45» թվերը փոխարինել «46» թվերով:

1.3 Պայմանագրի Հավելված N 1-ի (Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի) UC certificate դոմեյնների ցանկը լրացնել հետևյալ տողով՝

«

46	+1 SAN for SSL ID:185510, 12months erepo.gov.am դոմենի համար (տրամադրման վերջնաժամկետը՝ 29.07.2016թ.)

»:

1.4 Պայմանագրի Հավելված N 2.-ի (Վճարման ժամանակացույցի) 2-րդ տողի սյունակներում «828000» թվերը փոխարինել «847800» թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«Սոֆթ Թայմ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք.Երևան, Սարմենի 1, տարածք 1, հեռ. 010 505105
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 1510018455860100
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 02608299
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ hasmik@softtime.am
/ Դ. Բեգլարյան /	/ Հ. Մարտիրոսյան /
Կ.Տ	Կ.Տ